[. . . . .]ևիդ Եկեղեցւոյ, սեանդ ճշմարտութեան[. . . .][և Հռետորի
Տեառն Տեառն Մխիթարայ Աբրայի և Աստուածաբան Վարդապետի [1]

Զյղեալ քարտէզդ ուրախալից, որ վասն շնորհաւորութեան շնորհապայծառ և նշուլազեղ ծննդեան Տեառն մերոյ յիսուսի քրիստոսի սիրով ընկալայ ի դեկտեմբերի 26. և ընթերձեալ ուրախ եղէ ոչ սակաւ. այլ արդ՝ ո՛չ ապաքէն և անուանդ գերազանցութիւն, և աստուածաբանութեանդ քո համբաւ և կրօնիդ արփիաճաճանչ և արփացընցուղ բարեվայելչութիւն և հրեշտակակերպ կենցաղաւարութիւն, և յետին ժամանակս յարուցեալ լուսաւորութիւն տանն ողորմելի հայոց, աճապարեալ ստիպեսցէ զիս՝ զնոյնգունակն ողջոյն և սէր. և շնորհաւորումն, պայծառութեանդ քո ընծայեալ մատուցանել. քանզի և սէրն մեր, որ հիմնեալ է ի մեզ եզականապէս, վասն որոյ միշտ զտիւ և զգիշեր հայցեմ ի Տեառնէ մերմէ յիսուսէ քրիստոսէ՝ զի զքեզ զեղբայրդ իմ գերազանցոյ, և զվերապատուելի վարդապետս և զնորընծայ աշակերտս քո ամբորձ և անսասան պահեսցէ. և զքեզ՝ որ որպէս ի հինս զմօվսէս կացոյց ի մէջ ազգին իսրայելացւոց. հանել քեւ ի յեգիպտոսէ յերձուածողութենէ. և ի նորս զլուսաւորիչն մեր սրբազան. դարձուցանել զազգն ողորմելի ի խաւարէ մոլորութեան. միշտ ի ձեռն զանազան անուշահոտ ծաղկանց բուրաստանաց անթառամելիս և միշտ հաստաբոյրս, որք հանապազ զազգն լուսաւորեն, բարձր բազկաւ և հզօր ձեռամբ իւրով կարողացուսցէ և զօրացուսցէ Ամէն։

Ցամի Տեառն 1743
ի դեկտեմբերի 28
[ի Հռովմ]

Վրդանէս վարդապետ
իբր եպիսկոպոս

ՃԼ.

Մեր ընթերցողին կը թողունք՝ անդրադառնալ հետեւեալ ընդարձակ վաւերաթուղթին շահեկանութիւնը։

Նամակագիրը, Պետրոս Ա. Կաթողիկոս, մանրամասն կը խօսի երեք գլխաւոր նիւթերու շուրջ, որոնք են. 1°. Իր արկածալից ուղեւորութիւնը դէպ ի Կ. Պոլիս. 2°. Ցանձնարարութիւն առ Մխիթար՝ Ջուղայեցի քահանայի մը նկատմամբ, որ Վենետիկէն անցնելով պիտի երթայ Հռովմ. 3°. Ցանձնարարութիւն մը իր անհաւատարիմ ուղեկից Զմմառեան Հ. Նիկողայոսի մասին։

Իսկ Պոլիս ուղեւորելուն նպատակը ուրիշ անգամ մ՚ալ շեշտած էր արդէն այսպէս. «զի օգնեցից Աստուծով դարձման եկեղեցւոյ և եղբարց և ինձ ֆարման ազատութեան ի յաքսորանաց (1743 Օգոստ. 7. Գր. առ Մխիթար)։

Գերյարգելի Աբրահոմ Ողջուն և առաքելական օրհնութիւն

Ցայտ առնեմ մեծաւ սիրով վերոյ գրեցեալ ճշմարիտ և ամենայարգելի Եղբայրութեանդ զորպիսութենէ տառապելոյս. զնոյն կրկնեմ յաւելով որք պատահեցան զկնի, վասն զի ոչ ընկալա պատասխան առաջնոյն։ Ի ալիկօռնաու եւս գրեցի գիր, ետու ստեփան վարդապետին ներ յաւուր չուեցման իմոյ. զի խրատ խնդրեալ էի յառաջադէմ եղբայրութենէ և ի սոցանէ եւս ոչ (ոչ) ընկալա պատասխան։ Զկնի հասանելոյս ի վանքն

1. Նամակիս վերին մէկ անկիւնը փրցուած ըլլալով՝ վերնագրին մէկ մասը կիսատ է, ինչպէս կէտերը ցոյց կու տան։